

# **«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ**

## **ՆԱԽԱԳԻԾ**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **Օ Ր Ե Ն Բ Ը**

### **«ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

#### **Հոդված**

**1.** «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» **2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-194-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:**

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում «և տարեկան ծրագրերին» բառերը փոխարինել «ծրագրին» բառով:

**Հոդված 3.** Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ. ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 4.** Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «և տարեկան ծրագրերի նախագծերը և դրանք» բառերը փոխարինել «ծրագրի նախագիծը և» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «, իսկ աշխատանքների տարեկան համամասնություններն արտացոլվում են տարեկան ծրագրում» բառերը:

**Հոդված 6.** Օրենքի 12-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 7.** Օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ մասում «և տարեկան ծրագրերի» բառերը փոխարինել «ծրագրի» բառերով:

**Հոդված 8.** Օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասում «և տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով:

**Հոդված 9.** Օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ, 6-րդ կետում և 7-րդ մասում «և տարեկան ծրագրերով» բառերը փոխարինել «ծրագրով» բառով:

**Հոդված 10.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրվանից:

